Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 221 - Ա որոշման

«ԵՊՀ ՍԱՐԿԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Տեղեկատվական գրագիտության, ուսուցման և սոցիալական համախմբվածության բարելավման համար նպաստավոր միջավայրի ստեղծում՝ վերանորոգելով Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի ճշգրիտ գիտությունների ընթերցասրահը: 1996 թվականից ի վեր «Իզմիրլյան հիմնադրամն» աջակցում է ԵՊՀ Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանին՝ նպատակ ունենալով միջազգային չափանիշներին համապատասխան արդիականացնել գրադարանը, որից օգտվում են մեծ թվով ուսանողներ և հետազոտողներ: Հիմնադրամը մշտապես իրականացնում է գրադարանի ենթակառուցվածքների բարելավման, տեխնիկական և բովանդակային վերազինմանն ուղղված տարատեսակ նախաձեռնություն-ներ, որոնք համաձայնեցվում են Երևանի պետական համալսարանի հետ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Իզմիրլյան Բարեգործական հիմնադրամ, Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088
4.	Ծրագիրը կատարողը	Իզմիրլյան Բարեգործական հիմնադրամ, Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ԵՊՀ Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան փող., 1 շենք Ծրագրի բնագավառը՝ կրթություն:
6.	Ծրագրի բյուջեն	68,109,040 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևանի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան փող., 1 շենք

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի ապրիլի 10-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական ընկերության հետ պայմանագրի կնքում՝ նախագծի համաձայն և ծախսերի նախահաշվարկի սահմաններում թիվ 503 ընթերցասրահի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 43,000,0010 դրամ: Մասնագիտացված ընկերության հետ պայմանագրի կնքում՝ թիվ 503 ընթերցասրահի համար ջեռուցման, օդափոխության և օդորակման (ՋՕՕ) համակարգի գնման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 25,109,040 դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 10-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Երևանի պետական համալսարանի Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի #503 ընթերցասրահի վերանորոգում: Շինարարական աշխատանքների իրականացում՝ 43,000,0001 դրամ: Պայմանագիր YSU 1/22 Հիմնական աշխատանքներ/ծառայություններ. – Քանդման աշխատանքներ, – Պատերի և առաստաղների վերանորոգում/ներկում, – Հատակների փոխարինում, – Էլեկտրամոնտաժային աշխատանքներ, – Վիտրաժների փոխարինում, – Դեկորատիվ տարրերի տեղադրում: Երևանի պետական համալսարանի Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի հինգերորդ հարկի 503 ընթերցասրահի օդափոխության և օդորակման համակարգի տեղադրում: Ջեռուցման, օդափոխության և օդորակման (ՋՕՕ) ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ 25,109,040: Պայմանագիր 2/22 Հիմնական աշխատանքներ և նյութեր. – Օդորակման արտաքին բլոկի (VRF V6, 33.5 կՎտ) գնում և տեղադրում,

		– Օդորակման ներքին բլոկների (կանալային և կասետային) գնում և տեղադրում, – Օդափոխության ներածման, արտածման ռեկուպերատորի և օդամղիչների գնում տեղադրում, – Օդափախության օդատարների տեղադրում, – - Օդորակման պղնձե խողովակաշարի և այլ անհրաժեշտ պարագաների տեղադրում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Երևանի պետական համալսարան, որի հետ 2022 թվականի փետրվարի 21-ին ստորագրվել է Նվիրատվության պայմանագիր, որի նպատակն է ստեղծել նպաստավոր միջավայր՝ տեղեկատվական գրագիտության, ուսուցման և սոցիալական համախմբվածության բարելավման համար՝ վերանորոգելով ԵՊՀ Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի ճշգրիտ գիտությունների ընթերցասրահը: ԵՊՀ-ն պատասխանատու է կահավորման աշխատանքների համար անհրաժեշտ համաֆինանսավորման ապահովան, ծրագրին աջակցություն ցուցաբերելու և վերակառուց-ված ընթերցասրահի պահպանումը ծրագրի ավարտից հետո ապահովելու համար:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

07.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ